# ՅՈՒՑԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ

## ՏՊԱԳՐԵԼՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ։

1823

# ՑՈՒՑԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ

## ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ 'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի Միաբանութենէ Ամենապատիւ
Տն Մխիթարայ մեծի Աբբայի։

կարգեալ ըստ Այբուբենից՝ հանդերձ համառօտ բացատրութեամբ իւրաքանչիւր Գրոց։

A/841

'Ի ՎԷՆԷՏԻԿ

'Ի Տպարանի Վանաց սբյն Ղազարու։

1823

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Յետ սպառելոյ Ցուցակի գրոց մերոց տպագրելոյ յամին 1810, դիպողագոյն դատեալ եղև այժմ երկրորդ անգամ տպագրել զնոյն 'ի գրոց բարբառ, յաւելլով'ի նոյն և որ ինչ յետ այնր 'ի լոյս ելեալ են. զի թէպէտ ամ ըստ ամէ տեսանեն ընթերցասէրք զՑուցակ գրոց նոր տպագրելոց''ի կատարած Օրացուցին, և նովին լրացուցանեն զթերութիւն առաջնոյն, սակայն կարևոր ևս համարեցաք զամենայնն միահաղոյն բովանդակութեամբ ամփոփել յառաջիկայ Ցուցակս, հանդերձ հարկաւոր տեղեկութեամբք իւրաքանչիւր գրոց, առ 'ի դիւրացուցանել ընթերցասիրաց զգիւտ նոցին։

'Ի վեր արկաք 'ի Ցուցակիս * աստեղանշանս և † խաչանշանս, ազդել կամելով այնու զայս ինչ. զի ուր առ անուամբք գրոցն դրոշմեալ իցէ այս * աստղ, յայտ առնէ թէ սպառեալ է այն գիրք, և կամ թէ կարի դժուարագիւտ է. իսկ ուր † խաչ դրոշմեսցի, իմանալ արժան է՝ թէ սակաւ օրինակք գտանին 'ի գրոց անտի. քանզի հնութիւն ժամանակին ծախեալ է զնոսին ։

## Ազգասէր ։

Գիրք յորդորանաց՝ 'ի շինութիւն և յօգուտ Ազգի և Ընկերութեան։ Աշխարհաբառ լեզուաւ յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան ։ Տպագրեալ յամի տն 1815 ։

## Ալպերտ ։

† Համառօտութիւն մեծարանութեան Մեծին Ալպերտի ։ 'ի լոյս ընծայեալ աշխատասիրութբ Տն Մխիթարայ մեծի Աբբայի ։ Տպագրեալ յամին 1715 ։

## Ակն հոգւոյ ։

Փոքրիկ աղօթագիրք, որ և կաղմի հասարակօրէն է պարտիզի ։ Աշխատասիրութիւն Մխիթարայ Աբբահօր ։ Տպագրեալ յայլ և այլ ժամանակս ։

## Աղբիւր բարի ։

* Հոգևոր խրատք և պատմութիւնք օգտակարք ։ Յօրինեալ հաւաքածոյ թարգմանութբ Պետրոս վարդապետի Թիֆլիզեց-

․ոյ, և սրբագրութ̃բ 'ի լոյս ընծայեալ 'ի Մխիթարայ Աբբայէ՝ յամի 1722։

## Աղօթագիրք աշխարհաբառ։

Յորում են ամենայն աղօթք հարկաւորք ըստ պատշաճի տօնից և աւուրց և պիտոյից. զարդարեալ բազմատեսակ պատկերօք, որ պատշաճեալ են առ իւրաքանչիւր տօնս։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան՝ 'ի դիւրութ̃ի բարեպաշտ աշխարհականաց։ Տպագրեալ յամի 1822։

## Աղօթամատոյց ս̃բյն Յովսեփայ։

Յորում են այլ և այլ գովեստք և աղօթք առ ս̃բն Յովսէփ և առ ն̃ր Ածածինն։ Յօրինեալ յաշակերտաց Մխիթարայ Աբբայի։ Տպագրեալ յամի 1781։

## Ամարանոց բիւզանդեան։

Յորում են նախ աշխարհագրական տեղեկութ̃իւնք 'ի վերայ նեղուցին Կոստանդնուպօլսոյ. և ապա ստորագրին ոտանաւոր չափմամբ ծովեզերեայ գիւղք, և հնութիւնք նոցին։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան։ Տպագրեալ յամ̃ին 1794։

## Այբբենարան

'ի պէտս մանկանց 'ի մարզութիւն ընթերցանութեան. տպագրեալ 'ի կրկին գիրս, միջակ և մեծ գրովք։

## Աշխարհագրութ՟ի

### 'Ի վերայ չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ։

Բաժանեալ 'ի զանազան հատորս. ուր բովանդակին հարկաւոր գիտելիք 'ի վերայ քաղաքաց, գիւղից, գետոց և լերանց. և 'ի վերայ բարուց, սովորութ՟եց, կառավարութ՟եց, լեզուաց և կրօնից իւրաքանչիւր տեղեաց և ազգաց։ Նոյնպէս պատմին և ամենայն բերք և վաճառք քաղաքաց և աշխարհաց։ Մինչև ցարդ 'ի լոյս ընծայեցան հատորք մետասան. որոց Առաջինն է Համառակախօսութ՟ի ընդհանուր աշխարհագրութ՟ե։ Երկրորդն՝ Ամերիկա միահատոր։ Երրորդն՝ Ափրիկէ նոյնպէս միահատոր։ Չորրորդն Եւրոպիա՝ բաժանեալ 'ի Է՟ հատորս։ Եւ Հինգերորդն Ասիա, տպագրեալ միայն Ա՟ և Բ՟ հատորքն, այն է՝ Հայաստան և Հնդկաստան։ 'Ի լոյս ընծայեալ աշխատասիրութ՟բ Տ՟ն Տ՟ն Ստեփաննոսի Գիւվէր Ագոնց՝ Գերապատիւ Արքեպիսկոպոսի և Ընդհանրական Աբ-

բայի Մխիթարեան միաբանութե. և Հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան։ Տպագրութին սկսեալ է յամին 1802։

—Նոյն աշխարհագրութիւն՝ գտանի և պատկերազարդ. բաժանեալ 'ի բազում հատորս։

—Եւ նոյնն դարձեալ պատկերազարդ՝ ներկեալ վայելուչ երանգօք։

## Աշխարհացոյցք։

† Համատարած մեծ, փորագրեալ Յամստէրտամ՝ յամի 1695։

Համատարած փոքր քառակուսի, փորագրեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Ընտաղեան, յամի 1784։

† Հայաստանեայց մեծ, փորագրեալ 'ի Վենետիկ՝ յամի 1778։

Հայաստանեայց փոքր, փորագրեալ'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Խաչատուրեան, յամի 1751։

Երկրին աւետեաց, փորագրեալ'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Խաչատուրեան, յամի 1746։

Չորից մասանց աշխարհի որիշ որիշ, փորագրեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Ընտաղեան, 'ի 1786 և 'ի 1787։

Օսմանեան տէրութե, փորագրեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Ընտաղեան՝ յամի 1787։

Սեաւ ծովու և շրջակայից նորա, հան-

դէրձ Բուժկէլու, փորագրեալ 'ի Վէնէ-տիկ յամի 1791:

Նեղուցին Կոստանդնուպօլսոյ, փորա-գրեալ 'ի Վէնէտիկ յամի 1791:

Մարմարա ծովուն և շրջակայից նորա, փորագրեալ 'ի Վէնէտիկ յամի 1805:

Պոնտոս ծովուն և շրջակայից նորա, հանդերձ տաճկական գրովք, փորագրեալ 'ի Վէնէտիկ յամի 1820:

## Առաքինութեանց և Մոլութեանց:

Աստուածաբանութիւն բարոյական՝ բաժանեալ յերկուս հատորս: Թարգմանեալ 'ի Յա-կոբայ Կրօնաւորէ Ջահկեցւոյ, և տպա-գրութեամբ 'ի լոյս ընծայեալ 'ի Մեծէն Մխի-թարայ Աբբայէ՝ յամի 1721: Դարձեալ տպագրեալ յաշակերտաց նորին՝ բաղդա-տութեամբ հին օրինակաց, յամին 1773:

## Աստուածաշունչ:

† Սէ գիրք հին և նոր կտակարանաց՝ մե-ծադիր և պատկերազարդ: Տպագրեալ յամի 1733, աշխատասիրութեամբ Տն Մխի-թարայ Աբբահօր:

—Դարձեալ նոյնն միջակ դրիւք և մանր գրով տպագրեալ յընտիր օրինակէ՝ բաղ-դատութեամբ ը հին ձեռագրաց և հանդերձ ծանօթութեամբք տարբերութեանց. 'ի ձեռն

Յովհաննու վարդապետի Զօհրապեան . յամին 1805 ։

Եւ նոյնն դարձեալ փոքրագիր՝ բաժանեալ 'ի չորս հատորս ։

## Ատենաբանութիւն ։

Այն է ատենական ճառ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ, ընդ այլ երկուց ճառից նորին 'ի համբարձումն Քրիստոսի, և 'ի գալուստ հոգւոյն սրբոյ ։ Տպագրեալ բաղդատութեամբ ձեռագիր օրինակաց յամի 1787 ։
—Նոյն Ատենաբանութիւն հանդերձ իտալական թարգմանութեամբ 'ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան, և համառօտ ծանօթութեամբք ։ Տպագրեալ յամի 1812 ։

## Արհեստ ածսխրութե ։

Քերթուած թարգմանեալ 'ի լատին բնագրէ 'ի հայ՝ ոտանաւոր չափմամբ . 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան . բաժանեալ յերիս գիրս ։ Յամին 1819 ։

## Աւետարան տնատեալ ։

Տպագրեալ փոքր գրիւք, ազնիւ և գեղեցիկ պատկերօք՝ յամի 1816 ։

## Բան գործնական, և գործ բանական ։

Հրահանգութիւն չորից բարոյական առաքինութեանց՝ ոտանաւոր չափմամբ ։ Յօրինեալ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան ։ Տպագրեալ յամի 1812 ։

## Բառարան հայկազեան լեզուի ։

* Բաժանեալ յերկուս հատորս. որոց առաջին է միայն գրաբառ, յորում բացատրին հասարակ բառք հայկազեան լեզուի ։ Տպագրեալ յամի 1749 ։ Գործ Մխիթարայ Աբբահօր, և աշակերտաց նր̃ ։

Երկրորդ հատորն պարունակէ նախ՝ զմնացորդս առաջին հատորոյն. երկրորդ՝ զյատուկ անուանս ս̃բ գրոց և արտաքին մատենագրաց. երրորդ՝ զբառս 'ի գրաբառէ յաշխարհաբառ. չորրորդ՝ յաշխարհաբառէ 'ի գրաբառ ։ Տպագրեալ յամի 1769 ։

## Բառարան Իտալական լեզուէ 'ի հայ և 'ի տաճիկ բարբառ ։

Յօրինեալ ըստ ընտիր բառարանաց Իտալացւոց, և ճոխացուցեալ ազգի ազգի ըն-

տիր յառկաբանութեք լեզուին՝ 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան ։ Տպագրեալ յամի 1804 ։

## Բառարան Գաղղիարէն և Հայերէն ։

Բովանդակի յերկուս հատորս. որոց առաջինն է 'ի Գաղղիականէ 'ի Հայ՝ համառօտ ոճով. տպագրեալ յամին 1811 ։

Իսկ Երկրորդ հատորն է 'ի Հայոյ 'ի Գաղղիական լեզու, նովին կարգաւ ։ Տպագրեալ յամի 1817 ։ Երկոքինն իսկ աշխատասիրութք Հ. Յարութեան վարդապետի Աւգերեան ։

## Բառարան Անգղիարէն և Հայերէն ։

Այս բառարան ևս բաժանեալ է յերկուս հատորս. որոց առաջինն է յԱնգղիականէ 'ի Հայ, յօրինեալ ըստ ընտիր բառագրոց անգղիացւոց, հանդերձ հնչմամբ անգղիական բառից՝ հայկական տառիւք, 'ի Հ. Յարութեան վարդապետէ Աւգերեան ։ Տպագրեալ յամին 1820 ։

Իսկ Երկրորդ հատորն է 'ի Հայոյ յԱնգղիարէն, յօրինեալ հանդերձ յաւելմամբ նորագիւտ հայկական բառից. և տպագրեալ 'ի 1823 ։

## Բարի խորհուրդներ ։

Ամսական մտածութ՟ի յօրինեալ աշխարհաբառ լեզուաւ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, հանդերձ տաճկական թարգմանութեամբ Պետրոս վարդապետի Աւգերեան ։ Տպագրեալ յամի 1809 ։

## Բացատրութ՟ի Շարականաց ։

Այն է մեկնութ՟ի դժուարիմաց բանից շարականի, ձոխ բանիւք և կարևոր տեղեկութ՟ք ածաբանական գիտութեանց ։ Յաւելեալ 'ի վերջոյ և ճառ 'ի վերայ բըխման Հոգւոյն ս՟բյ ։ Շարադրեալ 'ի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Աւետիքեան ։ Տպագրեալ յամի 1814 ։

## Բացատրութ՟ի Չափուց և Կշռոց ։

Յորում դնի նախ՝ յունարէն չափաբանութ՟ի Եպիփանու հանդերձ հայկական թարգմանութ՟բ. և քննին բանք չափուց և կշռոց Շիրակացւոյն և Խորենացւոյն ։ Երկրորդ՝ մեկնին ստուգաբանութեամբ հանդերձ ամենայն չափք, կշիռք և դրամք նախնեաց ըստ կարգի այբուբենից, յաւելեալ 'ի նմ՟ զեբրայական, զյոյն և զլատին բառս ։ Երրորդ՝ յաւելեալ լինին արդի չափք և կշիռք դաղղիացւոց ։ Եւ չորրորդ՝

դնի 'ի վախճանի ուրոյն համեմատութիւն հայկական նոյնպիսի բառից ընդ տաճկականին ։ Յօրինեալ 'ի Հ. Յարուե̃ վ̃դպտէ Աւգերեան ։ Տպագրեալ յամի 1821 ։

## Բժշկականութի̃ ։

Որ է աշխատասիրութի̃ Պարոն Միքայէլի Րէստէն՝ Բժշկի Եգիպտական իշխանին, և բաժանեալ յերկուս հատորս ։ Որոց առաջին հատորն է բուն բժշկականութի̃ տեսական և գործնական ։ Իսկ երկրորդն՝ բժշկական բառարան համառօտ 'ի զանազան լեզուս՝ հայկական գրովք ։ Տպագրեալ յամին 1822 ։

## Բնական պատմութի̃ Թռչնոց ։

Այն է ստորագրութի̃ զանազան տեսակաց Թռչնոց ըստ կարգի նոր Բնաբանից՝ հանդերձ կարևոր գիտելեօք, և զարդարեալ պատկերօք իւրաքանչիւր Թռչնոց, 'ի ձեռն Հ. Սամուէլ վարդապետի Սամսարեան՝ յաշխարհաբառ լեզու ։ Տպագրեալ յամին 1815 ։ Մինչև ցարդ ելեալ են 'ի լոյս վեց տեսակք միայն ։

## Բնական պատմութիւն Չորքոտանեաց։

Որ է ստորագրութիւն բնութեան և հանդամանաց իւրաքանչիւր ցամաքային կենդանեաց։ Յայժմ տպագրեալ են յաշխարհաբառ լեզու պատմութիւնք կապկաց և փղի, 'ի զանազան տետրակս բաժանեալ՝ հանդերձ պատկերօք նոցին։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան. տպագրեալ յամին 1801. և 1814։

## Բնական օրէնք։

Այն է կրթութիւն առ 'ի լինել բարի և պարկեշտ քաղաքացի. արարեալ յաշխարհաբառ լեզու 'ի Մեսրոպ վարդապետէ Աղաչըաղեանց։ Տպագրեալ յամին 1819։

## Բուրվառ աղօթից։

Գրքոյկ փոքրիկ, յորում են հատընտիր աղօթք և հայցուածք պիտանիք։ Տպագրեալ յամի 1801։

* Նոյնն փոքր ինչ մեծագոյն գրիւք քան զառաջինն և խոշոր գրովք, յոր յաւելեալ են և քանի մի աղօթք։ Տպագրեալ յամի 1803։

—Նոյնն դարձեալ առաւել մեծագոյն

դրեւք, և նովին գրովք. Ճոխացուցեալ այլ ևս կարևոր աղօթիւք՝ և նոր պատկերօք: Տպագրեալ յամի 1812:

## Գանձարան շնորհաց:

Բաժանեալ յերկուս դիրս. որոց առաջինն է մեկնութ՟ի Ո՛ղջ լեր թագուհի աղօթիցն: Իսկ երկրորդն՝ Ճառք 'ի վերայ տօնից և առաքինութ՟եց ոմ՟ց կուսին: Թարգմանեալ յիտալականէն 'ի Հ. Յովսէփ վարդապետէ Գաղտասարեան: Տպագրեալ յամի 1812:

## Գիշերք Եունկ փիլիսոփայի, կամ Եունկ ֆիյլէսօֆուն ֆիղանլէրի:

Յորում ստուերագրին մարդկայինս կենաց վիճակ և Թշուառութիւնք. և 'ի վերջին գոն նաև բարոյական և իմաստասիրական բանք: Բաժանեալ յերիս փոքր հատորս: Թարգմանեալ 'ի տաճկական լեզու՝ աշխատասիրութ՟ Երեմեան Պարոն Յովհաննիսի արքունի Թարգմանի: Տպագրեալ յամի 1819:

## Գործք առաքելոց:

Որ է ընտրեալ և առանձին տպագրութ՟ի գործոց և Թղթոց՝ միջակ դրեւք: Տպագրեալ յամի 1816:

## Դեղ կենաց ։

Է հոգևոր բժշկարան առ 'ի փարատել զախտս մեղաց, և յառաջնորդել յառաքինութիւն ։ Յօրինեալ յաշխարհաբառ լեզու կոստանդնուպօլսոյ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան. տպագրեալ յամին 1810 ։

## Դժոխք բացեալ ։

Յորում են մտածութիւնք 'ի վերայ տանջանաց դժոխոց ։ Թարգմանեալ յաշակերտաց Մխիթարայ Աբբայի, և տպագրեալ յամի 1753 ։

## Դիմառնութիւն կամ Բանաստեղծութիւն Չորից վերջնոց ։

Որ է հոգևոր քերթուած դիմառնաբար յաղագս չորից վերջնոց մարդոյ՝ 'ի գրաբառ և յաշխարհաբառ լեզու ։ Յօրինուած Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան. տպագրեալ յամին 1810 ։

## Դիտակ բիւզանդեան ։

† Այն է օրագրութիւն երևելի անցից ժամանակիս՝ 'ի լեզու աշխարհաբառ, սկսեալ

յամէն 1812 մինչև ցամն 1817։ Կան 'ի սմա և զանազան գիտելիք բանասիրականք, արհեստականք, և բնականք, դիպուածք և արտավէպք զուարճալիք, են։

## Դպրութի Նամակաց։

Յօրուած աւանդին կարևոր հրահանգք ձոխագոյն օրինակօք թղթոց, 'ի գրաբառ և յաշխարհաբառ լեզու՝ 'ի կատարեալ ուսումն արհեստի նամակագրութե։ Յօրինեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Թովմաճանեան։ Տպագրեալ յամի 1805։

## Դրախտ հոգւոյ։

* Յօրուածեն բանք հոգևորականք. Թարգմանեալ Տն Մխիթարայ մեծի Աբբայի։ Տպագրեալ յամի 1729։

## Եզովբոս։

Յօրուած բովանդակին Առակք՝ որք յածին յանուն Եզովբոսի առակախօսի, և վարք նորին. Թարգմանեալ յաշխարհաբառ լեզու՝ յաւելմամբ զանազան ծանօթութեց, ոտանաւոր իմաստից և բարոյական խրատուց՝ 'ի զբօսանս և 'ի կրթութիւն մանկանց, հանդերձ բազում պատկերօք. 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան։ Տպագրեալ յամի 1818։

## Եղանակ բիւզանդեան ։

† Այն է տեղեկութի օդերևոյթ փոփոխութեց իւրաքանչիւր տարւոյ ըստ իւրաքանչիւր քառորդաց լուսնի. սկսեալ յամէն 1803 մինչև ցամն 1820. և ճոխացուցեալ ամ ըստ ամէ ուսումնական և արուեստական տեղեկութք, և արտաքին և եկեղեցական պատմութք, յաշխարհաբառ լեզու ։

## Եռանկիւնաչափութի ։

Որ բովանդակի յերկուս գիրս՝ 'ի մակարդակ և 'ի գնտական եռանկիւնաչափութիւն. է գիտութի տեսական և գործնական. չափէ զհեռաւորութի և զբարձրութի լերանց, աշտարակաց և աստեղաց՝ եռանկեամբք և թուաբանական հաշուօք ։ Ունի 'ի վերջոյ և աղիւսակ նշանակաց 'ի պէտս այսր գիտութեան ։ Յօրինեալ 'ի Հ. Սահակ վարդապետէ Գրոնեան ։ Տպագրեալ յամի 1810 ։

## Երկրաչափութի ։

Բաժանեալ յերիս գիրս՝ յերկայնաչափութիւն, 'ի մակարդակաչափութի և 'ի հաստատաչափութի. որ տեսական և գործնական նախադասութք և դիւրիմաց ոճով

ուսուցանէ չափել և դիտել զամենայն տարածութիւն և զհեռաւորութիւն, հանդերձ տախտակօք պատկերաց: Յօրինեալ 'ի Հ. Սահակ վարդապետէ Պռոնեան: Տպագրեալ յամի 1794:

## Երկրաչափութիւն գործնական:

Գործնական տեղեկութիւնք երկրաչափութեան համառօտեալ աշխարհաբառ լեզուաւ 'ի պէտս ուսումնասէր մանկանց: Յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան. և տպագրեալ յամի 1817:

## Եւսեբիոս:

Այն է ժամանակագրական պատմութիւն նախնեաց, և Քրոնիկոն կանոն աղիւսակեալ՝ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ. որոյ յունական բնագիրն կորուսեալ գոլով ըստ մեծի մասին, 'ի հայերէն հին թարգմանութենէ նորոգ թարգմանեալ եղև 'ի լատին բարբառ՝ հանդերձ ճոխ ծանօթութեամբ լատինականին 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան: Եռալեզու տպագրութեամբ յամին 1818:

## Եփիմէրտէս:

Յորում են մշտնջենաւոր շրջանք տարեկան գուշակութեանց օդոց ևն: Յօրինեալ 'ի

Սարգիս վարդապետէ Արքեպիսկոպոսէ Սառաֆեան ։ Տպագրեալ յամին 1796 ։

## Ընդօրինակութիւն գործնական ։

Որ է ուսումն ճշգրիտ գծագրելոյ զայն ամենայն, որ անկանի ընդ տեսութեամբ. հանդերձ առանձին հատորով վայելուչ տախտակաց 'ի գործադրութիւն կանոնացն ։ Յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան ։ Տպագրեալ յամի 1815 ։

## Թէնհատէ պիր քեամիլ ատամ ։

† Այն է առանձնախօսութիւն Եունկ փիլիսոփայի 'ի վերայ արարածոց և արարչին. Թարգմանեալ 'ի տաճկական լեզու 'ի Պարոն Յովհաննիսէ Երեմեան ։ Տպագրեալ յամի 1816 ։

## Թովմա գեմբացի ։

Յորում են ազդու խրատք հոգևորականք առ 'ի նմանող լինելոյ Քրիստոսի. 'ի չորս գիրս բաժանեալ ։ 'Ի թարգմանութեանց այսր գրոց ընտիր է այժմեան թարգմանութիւն. որ է Հ. Վրթանէս վարդապետի Ասկէրեան ։ Տպագրեալ յամի 1786 ։

## Թուաբանութիւն գրաբառ ։

Յորում աւանդին պէսպէս ծանօթութիւնք զթուոց , և զյատկութեց նշ․ և կանոնք յոլովք յազգի ազգի հաշուս պիտանիք , հանդերձ բազում օրինակօք ։ Արարեալ ՚ի Հ․ Սուքիաս վարդապետէ Ագամալեանց ։ Տպագրեալ յամի 1781 ։

## Թուաբանութիւն աշխարհաբառ ։

Յորում աւանդին կանոնք դիւրիմացք , և օրինակք պարզք և բացայայտք , և քանի մի թուաբանական խաղարկութիւնք զուարճալիք ։ Աշխատասիրեալ ՚ի Հ․ Խաչատուր վարդապետէ Սիւրմէլեան ։ Տպագրեալ յամի 1788 . որ և ՚ի 1817 նորոգ տպագրեալ՝ քննութեամբ և յաւելմամբ զանազան փորձից և բանից ՚ի դիւրութիւն ուսանողաց , ՚ի նոյն հեղինակէ ։

## Ժամագիրք ։

Որ է կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ ։ Տպագրեալ յամի 1793 . որ ընտիր է քան զայլ առաջին տպագրութիւնս , ուր յաւելեալ են ՚ի վերջոյ նաև Շարականք ննջեցելոց ։

## Իմաստասիրութի̃ բարոյական ։

Յորում են բարոյական խրատք՝ զարդարեալ բազմադիմի յիշատակօք զանազան հին պատմութե̃ց, և առակաց. ուր յաւելեալ է 'ի վերջոյ 'ի Թարգմանչէն ծանօթութիւն հնութե̃ց և մթին ասացուածոց հեղինակին. 'ի ձեռն Հ. Վրթանէս վարդապետի Ասկէրեան. տպագրեալ յամի 1793 ։

## Խթան զղջման ։

* Խրատք պիտանիք և մտածութիւնք վ̃ խոստովանութեան և ապաշխարութեան ։ Թարգմանեալ 'ի տ̃ր Պետրոսէ Մուհուպեան. տպագրեալ յամի 1727 ։

## Խոկմունք քրիստոնէականք ։

Ամսօրեայ մտածութի̃ք համառօտ և ազդու բանիւք ։ Ընտիր է վերջին թարգմանութի̃՝ յամի 1771. 'ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասկէրեան ։

## Խորհուրդ ճգնապաշտութե̃ ։

Յորում մեկնաբանութե̃ յառաջ բերին վկայութի̃ք ս̃բ գրոց վասն տնօրէնական խորհրդոյն Ք̃սի, առ 'ի կրթութիւն ճգ-

պաշտութե։ Յօրինեալ 'ի Հ. Մատթէոս վարդապետէ Եւդոկիացւոյ. և տպագրեալ յամի 1775։

## Խորհրդատետր սրբ Պատարագին։

* Տպագրեալ յամի 1741. մեծագիր և խոշորագիր։

— Եւ երկրորդ անգամ նոյնն տպագրեալ 'ի 1809. մեծ և փոքր դրիւք և միջակ գրովք։

— Նոյնն դարձեալ երրորդ անգամ 'ի 1823. կրկին դրիւք, մեծ խոշորագիր, և փոքր միջակագիր, և պատկերօք զարդարեալ։

## Խրախճան պատմութե Հայոց։

Այն է համառօտութի պատմութե ազգիս Հայոց։ Յօրինեալ 'ի Հ. Միքայէլ վրդպտ Չամչեան, և տպագրեալ 'ի 1811։

## Խրատք կրօնաւորական կատարելութեան։

Որ է գիրք պիտանի և օգտակար վս կրօնաւորական վիճակի. ուր 'ի վերջոյ յաւելեալ են և մտածութիք ը եօթանց աւուրց եօթնեկին' 'ի վերայ եօթն առաքինութեց Քնի Տն մերոյ։ Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասկերեան. տպագրեալ յամի 1779։

## Ծաղիկ վարուց սրբոյ։

Համառօտ պատմութիւն վարուց սբց՝ բաժանեալ յերկուս փոքրիկ հատորս. յառաջնումն են վարք սբցն՝ զորս տօնէ եկեղեցի հայաստանեայց. 1800։ Եւ յերկրորդն՝ են վարք սբց և երևելի արանց՝ զորս յիշատակեն յայսմաւուրք։ Յօրինեալ՝ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան։ Տպագրեալ յամի 1803։

## Ծառ կենաց։

† Յորում բովանդակին մեկնութիւնք խորհրդոյ սբյ պատարագին, զարդարեալ պատկերօք հին և նոր կտակարանաց։ Հաւաքեալ յԱթանաս վարդապետէ Տայր սիմոնեան, և տպագրեալ՝ի 1750։

## Կերակուր քահանայից։

* Խրատք և ազդարարութիւնք վասն քահանայից՝ի գործ ածային պաշտաման։ Թարգմանեալ՝ի Տէր Ածատրոյ Ջուղայեցւոյ։ Ընդ սմին կազմի և գրքոյկն կոչեցեալ արհեստ փրկութեան, թարգմանեալ յաշակերտաց Մխիթարայ մեծի Աբբայի, և տպագրեալ յամի 1760։

## Կիւլղարի Թեվարիխ ։

Համառօտութիւն պատմութեան ազգիս Հայոց 'ի լեզու տաճկական ։ Յօրինեալ 'ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեան, և տպա– գրեալ 'ի 1811 ։

## Կշիռ ժամանակի ։

* Յորում են հոգևորական խրատք՝ բաղ– դատութք ժամանակաւոր բարեաց ընդ յաւիտենականսն ։ Թարգմանեալ 'ի Հ. Զաքարիա վարդապետէ Աւէքսանեան ակնեցւոյ ։ Տպագրեալ յամի 1750 ։

## Կրթութիւն աղօթից ։

Այն է կրթութիւն մտածական աղօթից, յորում են և գովեստք առ սբ Ածածինն ոտանաւոր չափմամբ ։ Կայ 'ի վերջոյ և կարգ լիակատար ներողութ օրհնութիւն շնորհելոյ հոգեվարաց ։ Աշխատասիրեալ 'ի Գերապատիւ Մխիթարայ Աբբայէ ։ Վերջին տպագրութիւն որ եղև յամի 1772, ընտիր է քան զառաջինն ։

## Կրթութիւն կամ Քննութիւն Խոս– տովանահարց ։

Այն է հրահանգ գործնական առ բարւոք մատակարարելոյ զխորհուրդն ապաշխա–

րութեան՝ հարցմամբ և պատասխանեօք ։ Թարգմանեալ յիտալական լեզուէ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Օղուլլուխեան . տպագրեալ յամի 1821 ։

## Համգամանակ հաւատոյ ։

Որ է բացատրութիւն բանից հաւատամքին. յօրինեալ կրկին լեզուաւ՝ յաշխարհաբառ և 'ի տաճկերէն , 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան . տպագրեալ յամի 1807 ։

## Հանդերձեալ կենաց գիրք ։

* Յորում հաստատի այլ և այլ օրինակօք գոյութիւն հանդերձեալ կենաց . Թարգմանեալ 'ի Յովհաննէս վարդապետէ Նիկոմիդացւոյ . տպագրեալ յամի 1731 ։

## Հասարակախօսութիւն կամ Ներածութիւն Աշխարհագրութեան ։

Որ է նախաշաւիղ աշխարհագրական գիտութեան, բովանդակեալ զընդհանուր գիտելիս աշխարհի, զուսումնականս, զբնականս և զքաղաքականս . հանդերձ զանազան տախտակօք պատկերաց և աշխարհացուցից ։ Աշխատասիրութեամբ Տն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց՝ Արհիեպիսկո-

պօսի և Աբբայի ։ Տպագրեալ յամի 1817։ Տես և Աշխարհագրութի ։

## Հաւատով խոստովանիմ։

Աղօթք յօրինեալ 'ի սբյն Ներսիսէ Շնորհալւոյ, և թարգմանեալ 'ի հայ բնագրէ յայլ և այլ լեզուս ։ Նախ՝ տպագրեցաւ չորեքտասան լեզուաւ, յամի 1815։ Երկրորդ՝ վեշտասան լեզուաւ, յամի 1818 ։ Երրորդ այժմ՝ քսան և չորս լեզուաւ, յամի 1823. որ է ընտիր քան զառաջին տպագրութիւն, ազնիւ թղթով, և բուն նշանագրովք իւրաքանչիւր լեզուաց ։

## Հեգերէն ։

Առաջին կանոն սաղմոսին տնատեալ, և բառքն բաժանեալ ըստ վանկից՝ 'ի պէտս մանկանց նորավարժից ։

## Հին Հայաստան ։

Աշխարհագրական ստորագրութի մեծին Հայոց ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց, քաղեալ 'ի գրոց մատենագրաց մերոց և այլոց ազգաց, բազում քննութբ տեղեացն և դրից ։ Աշխատասիրեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան ։ Տպագրեալ յամի 1822 ։

## Հիւսեակ բարեբանութեանց մէջ ածածնին ։

Ներբող առ նը Ածածինն 'ի բաղում գլուխս բաժանեալ, և տասն բանք գովեստից առ նը Ածահայրն Յովսէփ. քաղեալ 'ի բանից ածիմաստ վարդապետաց 'ի Հ. Մատթէոս վարդապետէ Եւդոկիացւոյ ։ Տպագրեալ յամի 1775 ։

## Հմտութիւն մանկանց ։

† Բաժանեալ 'ի չորս փոքրիկ հատորս. յորս հարցմամբք և պատասխանեօք առաջի դնին մանկանց նախկին սկզբունք և հարկաւոր գիտելիք՝ 'ի լեզու աշխարհաբառ. 'ի 72 դասս կամ համարս բաժանեալ՝ 'ի դիւրութիւն նորավարժից ։ Յօրինեալ 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան. տպագրեալ յամի 1818 ։

## Հրահանգ եօթնեկի ։

Աղօթագիրք, յորում են զանազան աղօթք վասն իւրաքանչիւր աւուրց եօթնեկի, և կրթութիւն հոգևոր գործոց բարեպաշտութեան ։ Յօրինեալ 'ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեան. տպագրեալ յամի 1802 ։

## Հրաշից ոբ. ածածնի.

Զանազան պատմութիւնք սքանչելեաց սբյ Կուսին: Հաւաքեալ թարգմանութբ ՚ի Հ. Զաքարիա վարդապետէ Ալեքսանեան: Տպագրեալ յամի 1772:

## Ձայն Քնի:

Ազդու խրատք ՚ի դիմաց Քնի առ հաւատացեալ հոգի, և զանազան աղօթք առ Քն: Արարեալ Տն Մխիթարայ վարդապետի և Աբբայի. տպագրեալ յամի 1753:

## Ղազար փարպեցի:

Պատմութիւն գրեալ ՚ի Ղազարայ փարպեցւոյ, սկսեալ ՚ի բաժանմանէ թագաւորութե Արշակունեաց մինչ ցօր մարզպանութե մամիկոնեանն Վահանայ: Ընտիր է մատենագիրս ՚ի բացատրութիւն սովորական հայերէն զրուցաց: Տպագրեալ յամի 1795:

## Ճաշոց գիրք:

† Որ է կարգաւորութիւն ընթերցուածոց Հայաստանեայց եկեղեցւոյ: Տպագրեալ յամի 1686, մեծադիր և խոշորագիր, բաժանեալ հասարակօրէն յերկս հատորս:

## Ճարտասանութիւն :

Բովանդակեալ 'ի հինգ գիրս. յօրինեալ ըստ շաւղաց երևելի և մեծանուն հեղինակաց ճարտասանութե. և ճոխացուցեալ յաճախութե ընտիր ընտիր օրինակաց նախնի հոյակապ լեզուագէտ մատենագրաց Հայկազեան ազգի: Շարադրեալ Տն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց Արքեպիսկոպոսի և Աբբայի : Տպագրեալ յամի 1775:

## Ճեմարան գիտելեաց :

Համառօտ տեղեկութի ամենայն ուսումնական գիտելեաց. յօրինեալ ոտանաւոր չափմամբ՝ հանդերձ ծանօթութեամբք և տախտակօք պատկերաց, 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան: Տպագրեալ երկիցս՝ յամի 1815, և 1818 :

## Մանրանկար կմ Մինիաթուռա :

Այն է ուսումն մանր նկարելոյ զպատկերս և զայլ ամենայն առարկայս՝ հանդերձ տախտակօք պատկերաց: Յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան. տպագրեալ յամի 1813 :

## Մեկնութիւն աւետարանին Մատթէի ։

Յօրինեալ ընդարձակ և գեղեցիկ վարդապետութ̃ 'ի Գերապատիւ Ռաբունապետէն մերմէ Մխիթարայ Աբբայէ · յորում գոն և կարևոր բացատրութիւնք 'ի վերայ ինչ ինչ խնդրոց հաւատոյ ։ Տպագրեալ յամի 1737 ։

## Մեկնութիւն Երգոց Երգոյն ։

Յօրինեալ 'ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ համառօտ և իմաստալից բանիւ, պարզոճով, և գեղեցիկ հայկաբանութ̃ ։ Տպագրեալ յամի 1789 ։

## Մեկնութ̃ի Ժողովողի ։

Բացատրութ̃ի ժողովող գրոցն Սողոմոնի ։ Արարեալ Տ̃ն Մխիթարայ մեծի Աբբայի · տպագրեալ յամի 1736 ։

## Մեկնութ̃ի չորեքտասան թղթոցն Պօղոսի ։

Այն է ճոխ և գեղեցիկ բացատրութիւն բանից առաքելոյն՝ բաժանեալ յերկս մեծ

հատորս. յորում են կարեւոր տեղեկութիւնք ածաբանական գիտութեանց եւ եկեղեցական հմտութեց. եւ զանազանութիւք ամենայն թարգմանութեց եւ հայերէն գրչագիր օրինակաց թղթոց առաքելոյն: Արարեալ 'ի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Աւետիքեան: Ա̃ հատորն տպագրեցաւ յամի 1806. իսկ բ̃ եւ գ̃ հատորքն 'ի 1811. եւ 'ի 1812:

## Մեկնութիւն Սաղմոսաց:

Բաժանեալ 'ի տասն հատորս, ընդարձակ եւ դիւրիմաց բացատրութբ̃ նկարագրական եւ այլաբանական իմացուածոց ութ կանոնաց Սաղմոսին: Աշխատասիրեալ 'ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեան: Մինչեւ ցարդ տպագրեալ են ութ հատորք՝ սկսեալ յամէն 1815: Մնայ տպագրութի Թ̃ հատորոյն, որ է ներածութի մեկնութե սաղմոսաց. եւ Ժ հատորոյն, որ է համեմատութի ընդ եբրայական բնագրին:

## Մեսրոպեան տառք:

Որ է գաղափար հայկական Մեսրոպեան Գրոց, որ այժմ անուանի Գլխագիր, բացայայտեալ ճշգրիտ կանոնօք համեմատութեց, եւ գծագրեալ 'ի վեշտասան աստիճանս չափոյ մեծութե: Փորագրեալ է բո-

վանդակն ՚ի վերայ պղնձոյ ՚ի յուլթ տախտակս. յամին 1816:

## Մխիթար գօշ:

Յորում են Առակք Մխիթար վարդապետի Գօշ անուանելոյ, և խրատական Ոտանաւորք սբ̃յն Ներսիսի Շնորհալւոյն և Կարապետ վարդապետի՝ ՚ի հրահանգս ուսումնասէր համբակաց: Տպագրեալ յամի 1790:

## Մշտնջենաւոր պարզատօմար:

Այսինքն է՝ աղիւսակեալ շարադասութիւն ամենայն տօնից տէրունականաց և սբ̃ց և աւուրց պահոց, յարմարեալ զնոսին ՚ի վերայ աւուրց ամսոյ՝ ըստ բերելոյ իւրաքանչիւր տարեգրոց, հանդերձ տօնացուցիւ: Աշխատասիրեալ ՚ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասկէրեան. տպագրեալ յամի 1782:

## Մտածութիւնք

### ՚Ի վերայ եօթն ցաւոց մէ Ս. Ծածնէ:

Արարեալ ՚ի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Աւետիքեան՝ գրաբառ և աշխարհաբառ լեզուաւ. տպագրեալ յամի 1810:

# Մատենութիւնք

## Չարչարանաց տն մերոյ յսի քսի ։

Արարեալ 'ի Հ. Մատթէոս վարդապետէ Եւդոկիացւոյ. և տպագրեալ յամի 1759։

## Յայտնութի՟ ա՟ծգիտութե՟ ։

Յորում յայտնաբանին համառօտ հարցմամբք և պատասխանեօք կարևոր գիտելիք զա՟յ, և հարկաւոր կանոնք քրիստոնէական հաւատոյ. բաժանեալ 'ի ծ՟է կիւրակէս տարւոյն, և 'ի հինգ տաղաւարս։ Յօրինեալ յաշխարհաբառ լեզու 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան։ Տպագրեալ յամին 1820։

## Յարացոյց ապաշխարողի ։

† Որ է մեկնութի՟ Ողորմեա ինձ ա՟ծ սաղմոսի, հանդերձ համառօտ պատմութ՟բ վարուց մարգարէին Դաւթի, առ 'ի յորդոր և քաջալեր ապաշխարողաց։ Թարգմանեալ 'ի Պետրոս վարդապետէ Թիֆլիզեցւոյ. և տպագրութ՟բ 'ի լոյս ընծայեալ 'ի Գերապատիւ Մխիթարայ Աբբայէ ։ Տպագրեալ յամի 1731։

## Յովհաննէս իմաստասէր ։

Այն է ճառ Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ հայոց կաթողիկոսի՝ ընդդէմ երեւութականաց, գտեալ յարքունի գրատան փարիզու ։ 'Ի լոյս ընծայեցաւ ծանօթութբ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան. տպագրեալ յամի 1807 ։
— Նոյն ճառ վերստին տպագրեցաւ յամի 1816. հանդերձ լատիներէն թարգմանութբ եւ յաւելուածով ծանօթութեանց՝ 'ի նոյն Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան ։

## Յովհան Ոսկեբերան ։

Տես Ոսկեբերան ։

## Նարեկ ։

Աղօթագիրք արարեալ 'ի սրբյն Գրիգորէ Նարեկացւոյ. տպագրեալ երիցս մանրադիր՝ 'ի 1789. 1795. 1807 ։

## Նարեկ պատկերազարդ ։

Է նոյնպէս աղօթագիրք հաւաքեալ յաղօթից եւ 'ի ճառից նորին սրբյն Գրիգորի Նարեկացւոյ, յարմարեալ 'ի վերայ աւուրց շաբաթու, եւ վայելուչ պատկերօք զար-

գարեալ։ Երկին է տպագրութիւն սորին մի-
ջակ գրովք. առաջինն 'ի 1763 ամին. իսկ
երկրորդն 'ի 1804. յորում յաւելան 'ի
վերջոյ և տաղք և գանձք նորին սրբոյ՝ հան-
դերձ տարբերութեամբք ձեռագիր օրինակաց։

## Նարեկի լուծմունք։

Բացատրութիւն մթին բանից և իմաստից
վերոյասացեալ աղօթագրոց սրբոյն Գրիգո-
րի Նարեկացւոյ՝ 'ի նպաստ բարեսէր աղօ-
թաւորաց. յորում է և առանձին բացա-
խօսութիւն 'ի հատուած ինչ գումարք խմբից
ներբողի սրբոյ Աստուածածնին։ Արարեալ 'ի Հ.
Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Ա-
ւետիքեան։ Տպագրեալ յամի 1801։

## Ախութ բժշկական։

Որ է համառօտ ստորագրութիւն բնական
իրաց, բուսոց, հանքաց են, որք 'ի գործ
ածին 'ի դեղորայս։ Յորում գտանին և
կարևոր գիտելիք և խրատք 'ի պահպանու-
թիւն առողջութեան։ Արարեալ 'ի Պարոն
Յովակիմ Բժշկէ Օղուլլուխեան 'ի լեզու
աշխարհաբառ։ Տպագրեալ յամի 1806։

## Նոր կտակարան։

Չորեքին սր Աւետարանք, Գործք առա-
քելոց, չորեքտասան Թղթք Պօղոսի, և

Կաթողիկեայք , հանդերձ յայտնութե՟ն Յովհաննու . տպագրեալ 'ի բզմ՟ նուագս ։

## Նուագարան օրհնութե՟ց ։

Մեկնութի՟ աւագ օրհնութե՟ց սաղմոսարանին, ես և որոց են՟ արտաքոյ նր՟ 'ի նը՟ գիրս. համեմատեալ ընդ եբրայական բնագրի և ը՟ թարգմանութի՟ս այլ և այլ ազգաց . հանդերձ յարմարագրութ՟ բանից աւագ օրհնուե՟ցն շարականի ։ Արարեալ 'ի Հ. Մխքայէլ վարդապետէ Չամչեան ։ Տպագրեալ յամի 1801 ։

## Ոսկեբերան ։

Համընտիր 'ի գերաշխարհիկ գործոց սր՟յ վարդապետին՝ Գիրք , և Ճառք և Ներբողեանք . թարգմանեալ 'ի հայ բարբառ 'ի յոյն բնագրէն, և լուսաբանեալ հանդերձ նախադրութ՟բք և ծանօթութեամբք՝ 'ի Հ. Եղիա վարդապետէ Թովմաճանեան ։ Տպագրեալ յերկուս հատորս՝ յամի 1818 ։

## Ուղղեծուծ ճ՟ծարանութե՟ ։

† Համառօտութի՟ Ա՟ծաբանական գիտութե՟. թարգմանեալ 'ի Պետրոս վարդապետէ Թիֆլիզեցւոյ . տպագրեալ յամի 1748 ։

## Ուսումնականութիւն նաւուղղութեան ։

Յորում բովանդակին ամենայն ուսմունք պատշաճեալք առ նաւուղղութիւն և առ անմոլար ճանապարհորդութիւն ՚ի խորս ծովու ։ Գոն և զանազան աղիւսակք նշանակաց՝ կարգեալք ՚ի պէտս այսր ուսման, հանդերձ բազում տախտակօք պատկերաց ։ Աշխատասիրեալ ՚ի Հ. Ղուկաս վարդապետէ Օղուլլուխեան . և տպագրեալ յամի 1809 ։

## Պաշտօն սրբոյ Կուսին ։

Այն է աղօթագիրք սրբոյ Աստուածածնի . յորում են ամսական մտածութիւնք, և այլ պաշտօնք ջերմեռանդականք առ սուրբ Կոյս Աստուածածինն՝ յաշխարհաբառ լեզու ։ Աշխատասիրեալ ՚ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան . տպագրեալ յամի 1818 ։

## Պատկեր տօնից սրբոյ Աստուածածնի ։

Յորում են ինն ճառք ներբողականք՝ խորհրդաւոր յարմարութեամբ բանից սուրբ գրոց, վասն տօնախմբութեանց սրբոյ Կուսին ։ Յաւելեալ ՚ի վերջոյ և ճառ տասներորդ ՚ի գովեստ սրբոյն Յովսեփայ . և զարդարեալ է գեղեցիկ պատկերօք ։ Յօրինեալ ՚ի Հ. Միքայէլ

վարդապետէ Չամչեան. տպագրեալ յամին 1805։

## Պատմութիւն Ածաշունչոց գրոց։

Որ է համառօտութիւն պատմութեանց հին և նոր կտակարանաց. յօրինեալ յաշխարհաբառ լեզու 'ի Հ. Յովհաննէս վրդպտէ Զօհրապեան. տպագրեալ յամին 1803։ Երկրորդ անգամ տպագրեցաւ յամի 1805 ուղղագրութեամբ և յաւելուածով։

## Պատմութիւն Գահմաղ ղուլի խանին։

Այն է պատմութիւն պատերազմաց Գահմաղլին, և ստորագրութիւն ներքին կողմանց պարսկաստանի։ Յօրինեալ 'ի տաճկական բարբառ 'ի դամպուրի Յարութիւնէ. տպագրեալ յամին 1800։

## Պատմութիւն Հայոց։

Սկսեալ 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն 1784։ Բովանդակեալ 'ի վեց գիրս և բաժանեալ յերիս հատորս. յորս աւանդի պատմութիւն ազգիս համեմատութեամբ զանազան մատենագրաց մերոց և այլոց ազգաց. կարգաւորաբար դնելով զգործս նահապետաց, թագաւորաց, իշխանաց և կաթողիկոսաց ազգիս Հայոց։ Գոյ 'ի վերջին

Հատորի և ժամանակագրութ՟ին հանդերձ աղխսակօք այլևայլ Թուականաց ։ Յօրինեալ 'ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեան ։ Տպագրեալ յամի տ՟ն 1784, 85, և 86 ։

## Պատմութիւն Հռովմէական ։

Արարեալ Ռօլէնի գաղղիացւոյ՝ 'ի հիմնարկութէ Հռովմայ մինչև 'ի փախձան հասարակապետութ՟են. բաժանեալ 'ի վեց հատորս, հանդերձ ծանօթութ՟ք, և զարդարեալ պատկերօք. գործ ընտիր և օգտակար ամենեցուն, և լի բազում հմտութեամբք ։ Թարգմանեալ յիտալական Թարգմանութենէ 'ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասկերեան. և բաղդատեալ ընդ գաղղիական բնագրին՝ յաւելմամբ ծանօթութ՟եցն 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան ։ Տպագրեալ յամի 1816. և 1817 ։

## Պատմութ՟ի Պոնտոսի ։

Յորում ստորագրին նորոգ աշխարհագրական քննութ՟բ շրջակայ քաղաքք և տեղիք սեաւ ծովուն. գնելով նաև զհնութ՟իս և զյիշատակարանս գտեալս 'ի քաղաքս ինչ, 'ի լեզու աշխարհաբառ ։ Ունի 'ի վերջոյ և աշխարհացոյց մեծ նոյն սեաւ ծովուն, նշանակեալ 'ի նմին և զտաճկական անուանս քաղաքացն բուն գրով նոցին ։ Աշխա-

տաճկերեալ 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան. տպագրեալ յամի 1819:

## Պատմութիւն և վարք Ռօպէնսոնի:

Յորում զանազան դիպուածովք ստուերագրին փորձանք մարդկային կենացս, 'ի պէտս խնամոտ դաստիարակութեան մանկանց և 'ի խրատ ծնողաց. Թարգմանեալ յաշխարհաբառ լեզու՝ 'ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան: Տպագրեալ յամի 1817:

## Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբայի:

Այն է անցք և պատմութիւն կենաց բարեյիշատակ Հօր մեր մեծի Մխիթարայ Աբբայի: Յօրինեալ Տն Ստեփաննոսի վդպտի Ագոնց՝ Արհիեպիսկոպոսի և Աբբայի: Տպագրեալ յամի 1810:

—Գոյ և համառօտ նկարագիր Մխիթարեան Միաբանութեան՝ հանդերձ հակիրճ պատմութեամբ վարուց, և ճիշտ կենդանագրաւ Մխիթարայ Աբբայի, և պատկերաւ կղզւոյն սրբոյն Ղազարու: Յօրինեալ 'ի հայ և յիտալական բարբառ 'ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան: Տպագրեալ յամին 1819:

## Պարտէզ ։

Որ է դիրք զանազան աղօթից և խնդրուածոց՝՝ի պէտս բարեպաշտից ։ Տպագրեալ՚ի բազում նուագս, այլ վերջին տպագրութիւն՝ յամին 1823. որ է փոքրագիր և մանրագիր, գեղեցիկ է՝ եթէ ըստ աղնուութե պատկերացն, և եթէ ըստ այլ համգամանաց ։

## Պիտոյից ։

Հռետորական նախակրթութիւնք սէր քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացւոյ ։ Այն է ուսումն ճարտասանութե հետևողութեամբ նախնի վարժապետաց յունաց ։ Տպագրեալ համդերձ ծանօթութիւնք առասպելեաց, և լուսաբանութիւ դժուարիմաց բանից՝ ՚ի ձեռն Հ. Յովհաննու վարդապետի Զօհրապեան. յամի 1796 ։

## Պնակ այբուբենից ։

Փորագրեալ ՚ի վենետիկ ՚ի պէտս մանկանց ։

## Պսակ Կուսին ։

Նուիրմունք զանազան աղօթից՝ համդերձ խորհրդածութիւնք՝ ՚ի յիշատակ եօթն ցա-

ւոյ մը Աճածնին. և 'ի պատիւ եօթն խնդութեց նորին ։ Արարեալ 'ի Հ. Յակոբ վարդապետէ Ստեփանեան ։ Տպագրեալ յամին 1794 ։

## Սօլէն ։

Տես Պատմութի Հռովմէական ։

## Սօտրիկվէց ։

Որ է գիրք կրթութե. քրիստոնէական և կրօնաւորական կատարելութե ։ 'Ի գրուածոց այսր հեղինակի տպագրեալ են երեք ճառք և եթ. այսինքն ճառ խոնարհութե, Համակերպութեան, և կրօնաւորական երից ուխտից, 'ի ձեռն Գերապատիւ Մխիթարայ Աբբայի. յամին 1741, և 42 ։

Ճառն Համակերպութե նորոգ թարգմանեցաւ ըստ յստակ հայկաբանութե՝ 'ի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Աւետիքեան. տպագրեալ յամին 1823 ։

## Սալէզայի ։

† Ներածութի հոգևոր կենաց, յօրինեալ 'ի սրբյն Ֆրանչիսկոսէ Սալեզեան՝ 'ի պէտս քրիստոնէից աշխարհականաց. և թարգմանեալ 'ի Սարգիս վարդապետէ Աբբեպիսկոպոսէ Սառաֆեան ։ Տպագրեալ յամի 1748 ։

## Սաղմոս ։

Մեծ գրեւք և խոշորագիր՝ տպագրեալ 'ի վերայ սպիտակ և կապոյտ Թղթոյ յամին 1786 ։

—Սաղմոս միջակ գրեւք. տպագրեալ յայլ և այլ նուագս. յորում որպէս և յառաջինսն գտանի և համառօտութիւն հնոյ տումարին, որով վարի ազգս հայոց ։

—Սաղմոս փոքրագիր և մանրագիր՝ տպագրեալ յայլ և այլ ժամանակս ։ Այլ վերջին տպագրութիւն որ եղև 'ի 1820, գերազանցէ քան զառաջինսն, զարդարեալ և գեղեցիկ պատկերօք ։

## Սեղան խնկոց ։

Աղօթագիրք տէրունական տօնից և ամենայն կիւրակէից. յօրինեալ Ճառական բանիւ և այլաբանական խորհրդածութեամբք, 'ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեան. տպագրեալ յամի 1817 ։

## Սկզբունք քրիստոնէական ։

* Գիրք հոգևորական կրթութեան 'ի պէտս բարի Քրիստոնէից. Թարգմանեալ 'ի Թէոդորոս վարդապետէ. տպագրեալ 'ի 1744 ։

## Վարդարանի աղօթք ։

Տպագրեալ 'ի զանազան դիրս բազում անգամ ։

## Վարք սրբոց ։

Որ է լիակատար պատմութիւն սրբոց՝ զորս տօնէ եկեղեցի Հայաստանեայց, բաժանեալ 'ի ժբ̃ հատորս, հանդերձ ծանօթութեամբք և զանազան պատկերօք սրբոց․ որոց վերջին հատորն է համառօտ պատմութիւն վարուց սրբոց՝ յիշատակելեաց յայսմաւուրս, և այլոց ծանօթ սրբոց՝ ըստ կարգի այբուբենից։ Աշխատասիրեալ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան ։ Տպագրեալ յամի 1810 ։

— Նոյնն՝ դարձեալ տպագրեալ է առանց ծանօթութեանց մեծադիր միահատոր 'ի պէտս եկեղեցեաց՝ 'ի նոյն 1810 ամին ։

## Վարք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ։

† Արարեալ 'ի Հ. Մատթէոս վարդապետէ Եւդոկիացւոյ․ տպագրեալ յամին 1749 ։

## Վարք սրբոյն Անտոնի աբբայի։

Արարեալ 'ի սրբոյն Աթանասէ Աղեքսանդրու Հայրապետէ. և նորոգ Թարգմանեալ 'ի լատինէ 'ի Հ. Բարսեղ վարդապետէ Լասալեան. տպագրեալ յամի 1794։ — Յաւելուած բանից և գործոց նորին սրբոյ հօրն, որք պատմին յայլոց մատենագրաց։ Աշխատասիրեալ 'ի նոյն հեղինակէ. և տպագրեալ յամի 1800։

## Վարք սրբոյն Աղեքսիանոսի.

Յօրինեալ աշխարհաբառ լեզուաւ, և տպագրեալ յամի 1800։

## Վարք սրբոյն Յովհաննու Ո.Ճ։

* Որ է պատմութիւն հիմնադրի կրօնաւորացն, որք դարման տանին հիւանդաց. Թարգմանեալ 'ի Յովհան Եպիսկոպոսէ Սեբաստացւոյ. տպագրեալ յամի 1724։

## Վկայութիւնք
## Գլխաւորութեան Պետրոսի առաքելոյն։

* Որ է քաղուածք վկայութեանց, որք գտանին 'ի գիրս Վարդապետաց ազգիս մերոյ 'ի վերայ գլխաւորութեան սրբոյն Պետրոսի

ռաքելոյն և յաջորդաց նորին ։ Թարգմանեալ 'ի լատին լեզու 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան ։ Տպագրեալ երկիցեան հայ և լատին՝ յամի 1804 ։

## Տարեգրութիւն ։

* Զանազան տետրակք տպագրեալք յայլ և այլ ժամանակս, յորս պատմին աշխարհաբառ լեզուաւ քաղաքական դիպուածք, բանասիրական տեղեկութիւնք, պատերազմունք տէրութեանց և այլ բազում գիտելիք ։ Արարեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճիճեան ։

## Տեսարան աշխարհի ։

Այն է՝ զուարճալի և կարևոր տեղեկութիւնք 'ի վերայ բնական իրաց, զգայուն կենդանեաց և իմացական բնութեանս, այսինքն մարդկան և հրեշտակաց. բաժանեալ յերիս գիրս ։ Յօրինեալ 'ի Հ. Յակոբ վարդապետէ Ստեփանեան ։ Տպագրեալ յամի 1810 ։

## Տեսութիւն համառօտ ։

* Որ է համառօտ ուսումն աշխարհագրութեան՝ հանդերձ ստորագրութեամբ ամենայն մասանց աշխարհաց, ծով թագաւորութեց, գաւառաց, և իւրաքանչիւր բերոց ։ Յօրի-

նեալ 'ի Հ. Ղուկաս վարդապետէ Ինճի֊ ճեան. տպագրեալ յամի 1791։

## Տեսութի՟ Ա՟ծաշունչ՟ք գրոց։

Որ է բովանդակութի՟ պատմութե՟ց հին կտակարանին մեկնօրէն պարզաբանութե՟, և հարկաւոր քննութեամբ ժամանակա֊ գրական դիտելեաց, վասն դիւրիմաց առ֊ նելոյ զնոյն 'ի պէտս ամենեցուն. բաժա֊ նեալ 'ի չորս հատորս։ Աշխատասիրեալ Տ՟ն Ստեփանոսի վարդապետի Ագոնց՝ Արք֊ եպիսկոպոսի և Աբբայի։ Տպագրեալ յա֊ մին 1819։

## Տետրակ հոգևոր խաղու։

Արարեալ Տ՟ն Մխիթարայ մեծի Աբբայի 'ի պէտս մանկանց. տպագրեալ բազում պատկերօք՝ յամին 1775։

## Տետրակ Ճանապարհորդութե՟ ընդ արեւելեան հնդկաստան։

Այն է ճանապարհորդութիւն Թաշառ անուն Յոհան Աստեղաբաշխի դէպ 'ի Շիամ։ Ծաղկաքաղ հաւաքեալ 'ի զանա֊ զան պատմագրաց 'ի ձեռն Հ. Մատաթիա վարդապետի Փիւսկիւլեան աշխարհաբառ լեզուաւ. տպագրեալ յամի 1815։

## Տետրակ ներողութենց ։

† Հաւաքեալ 'ի Սօփեալեան Սահակ վարդապետէ 'ի տաճկական լեզու. տպագրեալ յամի 1791 ։

## Տետրակ սպասաւորութե ։

Որ է դպրութի սրբոյ պատարագին ։

## Տետրակ օդապարիկ գնտոյ ։

* Որ է պատմութի օդագնաց ճանապարհորդութե՛ առաջին գտողաց զայս հնարս։ Արարեալ 'ի Հ. Եղիա վարդապետէ Էնտազեան. տպագրեալ յամի 1785 ։

## Տոմարագիտութի ըհանուր,

### եկեղեցական և քաղաքական ։

Յորում գտանին ամ տեղեկութիւնք կարևորք և պիտանիք յուսումն գիտութեմս, դիւրացուցեալ ևս 'ի ձեռն բաղում աշխատակաց ։ Գոն ևս մասնաւոր գիտելիք Նոր Տոմարին և Ծուազատկին ։ Յօրինեալ 'ի Հ. Խաչատուր վարդապետէ Սիւրմէլեան. տպագրեալ յամի 1818 ։

## Տումար մեծն Լէոնի ։

Յորում է կոնդակ սրբոյն Լէոնի հայրապետի առ Փլաբիանոս եպիսկոպոս կոստանդնուպօլսի. և Սահման ըստ ժողովոյն Քաղկեդոնի ։ Թարգմանեալ 'ի լատին և 'ի յոյն լեզուաց 'ի հայ բարբառ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան. յորում են և համաձայն վկայութիք բանից հարց մերոց և սրբոյն Կիւրղի ։ Տպագրեալ եռալեզու՝ յամի 1805 ։

## Տօնացոյց ։

Այն է ցուցակ տօնից և եկեղեցական արարողուեց հայաստանեայց եկեղեցւոյ. տպագրեալ յամի 1782 ։ Տես և Մշտնջենաւոր պարզատօմար ։

## Ցուցակ աւուրց լուսնի ։

Որ է պատկեր տարեկան շրջաբերութեան լուսնի՝ ըստ աւուրց իւրաքանչիւր ամսոյ ։

## Փիլիսոփայութի ։

Բաժանեալ 'ի չորս հատորս . այն է Տրամաբանութի , Բնաբանութի , Համաբնաբանութի և Բարոյական ։ Յօրինեալ յԱնտոնէ Կովչնոյ , և թարգմանեալ 'ի Հ.

Վրթանէս վարդապետէ Ասկէրեան. տպա-
գրեալ յամի 1750, և 51։

## Փիլոն Եբրայեցի։

Երեք ճառք նր յաղագս Նախախնամութե և կենդանեաց՝ որք պակասին 'ի յոյնն և 'ի լատինն, յեղեալ այժմ 'ի լատին բարբառ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան՝ 'ի հին հայ թարգմանութէ արարելոյ 'ի յոյն բնագրէ։ Տպագրեալ հայերէն, լատինե-րէն և հատուկտիր մնացուածովք յունա-կանին՝ յամի 1822։

## Քաղաքավարութե գիրք։

Աւանդին 'ի սմա կանոնք մարդկային կե-նակցութե օգտակար և պիտանի առ ամե-նայն մարդ։ Յաւելեալ 'ի վերջոյ և համա-ռօտ բովանդակութի սորա աշխարհաբառ լեզուաւ 'ի պէտս մանկանց. յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան։ Տպագրեալ յամի 1806։

## Քաղկեդոնի Սահման։

Տես Տումար սբյն Լեոնի։

## Քարոզ գիրք։

Համառօտ քարոզք յօրինեալք վկայութբք

ճք գրոց և ընտիր բանիւք սրբոց հարց և վարդապետաց։ Թարգմանեալ ’ի Հ. Վրթանէս վարդապետէ Ասկերեան. տպագրեալ յամին 1781։

## Քերականութիւնք հայկական լեզուի։

† Քերականութիւն Մխիթարայ մեծի Աբբայի, ’ի լոյս ընծայեալ տպագրութե յամին 1730 և 1770։

* Քերականութի Հ. Միքայէլ վարդապետի Չամչեան. յօրինեալ ը՟ն նախնի ուղղախօսութե հայկազեան լեզուի. և տպագրեալ յամի 1779։

* Դարձեալ նորին Քերականութի համառօտ՝ տպագրեալ յամի 1801։

Քերականութի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետի Աւետիքեան. յօրինեալ նորոգ քննութեամբ և կարգաւ, ’ի դիւրութի ուսանողաց. առաջին գիրքն յաշխարհաբառ լեզու, իսկ երկրորդն ’ի գրոց բարբառ. և տպագրեալ յամի 1815։

—Նորին դարձեալ Քերականութի համառօտ յաշխարհաբառ լեզու՝ ’ի դիւրին վարժութի ուսանողաց. տպագրեալ յամի 1819։

—Նոյն Քերականութին համառօտ յեղեալ նորոգ ’ի գրաբառ՝ ’ի նոյն Հեղինակէն. տպագրեալ ’ի 1823։

## Քերականութիւնք Իտալական լեզուի։

* Քերականութիւն Աթանաս վարդապետի. յօրինեալ 'ի նմանէ գրաբառ և տաճկերէն բացատրութեամբ. տպագրեալ յամի 1774։

Քերականութիւն Թօսկանեան ՝լեզուի։ Յորում աւանդին այլ և այլ կանոնք իտալական լեզուի 'ի գրոց բարբառ՝ հանդերձ տաճկական թարգմանութեամբ. նոյնպէս կրթութիւնք իտալական զրուցաց և ողջունագրոց. որպէս և յիտալական և 'ի հայ լեզու բանք առակաւորք։ Արարեալ 'ի Հ. Գաբրիէլ Աթոռակալ վարդապետէ Աւետիքեան. տպագրեալ յամի 1792։

## Քերականութիւն անգղիարէն և հայերէն։

Յօրինեալ համառօտ և պարզ ոճով, ամփոփելով զամենայն կարևոր գիտելիս անգղիական լեզուին՝ 'ի վարժութիւն հայոց, 'ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան։ Տպագրեալ յամի 1816։

## Քերականութի՟ հայերէն և անգղիարէն։

Յորում համառօտիւ աւանդին առաջին սկզբունք և նախնական կանոնք հայկական լեզուիս՝ 'ի վարժութի՟ անգղիացւոց։ 'Ի վերջոյ դոյ հաւաքումն համընտիր բանից հեղինակացն հայոց. աշխատասիրեալ 'ի նոյն հեղինակէ։ Տպագրեալ յամի 1819։

## Քերականութի՟ Գաղղիական լեզուի։

Յորում լիով համառօտին կարևոր կանոնք այնր լեզուի՝ ճոխ օրինակօք, հանդերձ հակիրճ յաւելուածով յաղագս չափաբերութեան Գաղղիական ոտանաւորաց։ Յօրինեալ 'ի Հ. Արսէն վարդապետէ Անթիմոսեան. տպագրեալ յամի 1821։

## Քրիստոնէական վարդապետութի՟։

Յօրինեալ 'ի Մխիթարայ մեծէ Աբբայէ աշխարհաբառ լեզուաւ. յորում են և տաղք և շարականք ասացեալք 'ի նմանէ. տպագրեալ երիցս՝ յամի 1727. 1732. 1771։

Դարձեալ, յօրինեալ 'ի նմանէ 'ի գրոց

բարբառ վն մանկանց նորավարժից. յո-րում գոյ և այբբենարան. տպագրեալ յամի 1725. և 1750:

Քրիստոնէական վարդապետութիւն հա-մառօտ 'ի պէտս սերտողութեան մանկանց յաշխարհաբառ լեզու. արարեալ 'ի Հ. Զաքարիա վարդապետէ Ալէքսանեան. տպագրեալ յամի 1770:

Միւս ևս՝ ոտանաւոր չափմամբ 'ի գրոց բարբառ, 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւ-գերեան. տպագրեալ յամի 1811:

## Օրացոյց:

Տպագրեալ վասն իւրաքանչիւր տարւոյ. յորում ցուցանին ամ տօնք և պահք ազ-գիս հայոց: Այլ և ամիսք և երևելի տօնք յունաց, լատինացւոց, հրէից, և տաճկաց, և ամիսք աղարիայի: Նաև ծնունդ և լրումն և քառորդք լուսնի: Եւ խաւարմունք լուսնի և արեգական: Առա-ջին աշխատասիրօղ սորա եղև Հ. Յակո-բոս վարդապետ Չամչեան. սկսեալ յամէն 1757:

[library stamp]